

ՈԼՍՈԼԵԾՄԱՆ ՈԼՂԵԳՈՒԳ

10

Բարկություն և անձնական իրավունքներ Չսպել բարկությունը՝ ակնկալիքներն և ստծուն հանձնելով



Խմբային ոլսուլցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Բարկություն և անձնական իրավունքներ

Չսպել բարկությունը՝ ակնկալիքներն Աստծուն հանձնելով:

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցման ուղեցույց

5-րդ խմբագրում



Բարկություն և անձնական իրավունքներ

Չսպել բարկությունը՝ ակնկալիքներն Աստծուն հանձնելով:

Ուսուցման ուղեցույց

5-րդ խմբագրում

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Anger and Personal Rights, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չեյենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չեյենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չեյենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Վերջին անգամ վերանայվել է. 08-2018

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 1

Հասկանալ սեփական բարկությունը

Մաս 1.

Այս նախագծի նպատակն է օգնել քեզ՝ տեսնելու, թե ինչ է տեղի ունենում, երբ դու բարկանում ես: Այս նախագիծը կօգնի քեզ՝ նախապատրաստվել հաջորդ դասաժամին դասի քննարկման համար: Փորձի՛ր վերհիշել գոնե երկու դեպք, որոնք տեղի են ունեցել վերջին մի քանի օրերի ընթացքում, երբ դու բարկացել ես (նեղսրտվել ես, գրգռվել ես, նյարդայնացել ես): Խնդրում եմ, պատասխանի՛ր հետևյալ հարցերին յուրաքանչյուր օրինակի համար:

Օրինակ 1.

1. Ամսաթիվ _____ ժամանակ _____ վայր _____

2. Ներգրավված մարդ(իկ) _____

3. Ի՞նչ արեց նա, որ քեզ բարկացրեց:

4. Ինչպե՞ս դու արտահայտեցիր (ցույց տվեցիր) քո բարկությունը (ի՞նչ գործողություններ և բառեր դու օգտագործեցիր):

5. Ինչո՞ւ դա քեզ բարկացրեց:

Օրինակ 2.

1. Ամսաթիվ _____ ժամանակ _____ վայր _____

2. Ներգրավված մարդ(իկ) _____

3. Ի՞նչ արեց նա, որ քեզ բարկացրեց:

4. Ինչպե՞ս դու արտահայտեցիր (ցույց տվեցիր) քո բարկությունը (ի՞նչ գործողություններ և բառեր դու օգտագործեցիր):

Բարկություն և անձնական իրավունքներ
Նախագիծ 1., էջ 2.

5. Ինչո՞ւ դա քեզ բարկացրեց:

Մաս 2.

Տարբեր մարդիկ տարբեր ձևով են արտահայտում իրենց բարկությունը: Եվ ամեն մի անհատ իր հերթին յուրովի, անհատական ձևով կարող է իր բարկությունն արտահայտել: Խնդրում եմ, նայի՛ր հետևյալ ցանկին և գնահատի՛ր ինքդ քեզ «0»-ից «10» սանդղակի վրա, թե ինչքան հաճախ ես դու տվյալ կերպ արտահայտում քո բարկությունը: «0»-ն նշանակում է, որ դու ընդհանրապես չես օգտագործում այդ ձևը, իսկ «10»-ը նշանակում է, որ միշտ ես օգտագործում այդ ձևը: Դու, հնարավոր է, ունենաս տարբեր ձևեր նույն միավորով:

Եթե կան այլ ձևեր էլ, որով դու ցույց ես տալիս քո բարկությունը, ավելացրո՛ւ դրանք ներքևում գտնվող դաստարկ տողերի վրա և գնահատի՛ր:

- | | | | | | | | | | | | |
|--------------------------------------|---|---|---|---|---|---|---|---|---|---|----|
| 1. Բարկացած բառեր..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 2. Բարկացած հայացք | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 3. «Արի՛ կովենք» | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 4. Աղաղակ | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 5. Վրեժխնդրություն..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 6. Լռություն..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 7. Ներսում պահել..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 8. Բարկությունն ուղղել ինքդ քեզ վրա. | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 9. Հումոր, ծաղրանք | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 10. _____..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 11. _____..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 12. _____..... | 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 2

Իմ անձնական իրավունքները

1. Կարդա՛ այս հատվածը և նշումնե՛ր արա դրա վերաբերյալ. Հակոբոս 1:19-21:
Ինչքանո՞վ է տարբեր այս համարում տրված խորհուրդն այն ձևից, որով դու
օգտագործում էիր քո բարկությունն անցյալում: Այս համարի ո՞ր մասը կլիներ
ամենադժվարը քո կյանքում իրականացնելու համար:

2. Անձնական իրավունքների մի ցուցա՛կ կազմիր՝ ինչքան որ կարող ես հիշել:
Ահա քո կյանքի մի քանի հիմնական ասպարեզներ, որոնք կարող են կապ
ունենալ անձնական իրավունքների հետ: Անդրադարձի՛ր Ուսանողի
ձեռնարկի 19-24-րդ էջերին՝ ավելի շատ տեղեկություն, ինչպես նաև
օրինակներ վերցնելու համար:

- | | | |
|------------------|------------------|--------------------|
| 1. ինքս | 5. սեփական իրեր | 9. առողջություն |
| 2. ժամադրություն | 6. ընկերներ | 10. հեղինակություն |
| 3. հագուստներ | 7. երաժշտություն | 11. ժամանակացույց, |
| 4. փող | 8. ապագա | ժամանակ |

Մեկ այլ ձև, որը դու կարող ես օգտագործել քո անձնական իրավունքները
զանազանելու համար, այն իրողություններն են, որոնք բարկացնում են քեզ:
Սովորաբար դա ներառում է որևէ անձնական իրավունք:

Ընտրի՛ր ամենաքիչը 5 խումբ:

Գրի՛ր երեք անձնական իրավունքներ յուրաքանչյուր խմբի համար
(շարունակի՛ր քո աշխատանքը հաջորդ էջում):

[illegible]

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 3

Իմ անձնական իրավունքների հանձնումը

Սա կարող է արվել որպես Աստծուն ուղղված անձնական նվիրվածություն՝ քո անձնական իրավունքները Նրան տալու առումով: Սա քո ընտրությունն է: Քո ուսուցիչը քեզից սա չի պահանջի: Այն ամբողջությամբ վերաբերում է քեզ և Աստծուն:

1. Ես _____ իմ անձնական իրավունքներն այսօր տալիս եմ Աստծուն:
2. Ես որոշում եմ սա անել՝ որպես Աստծո հանդեպ իմ սիրո արտահայտություն, ինչպես նաև ցանկություն՝ տալ Նրան ամբողջական իշխանություն իմ կյանքի բոլոր ասպարեզներում:
3. Ես որոշում եմ վստահել Հիսուսին, որ Նա կսովորեցնի ինձ, թե ինչպիսի նոր ձևերով արձագանքեմ մարտահրավերներին, որոնց ես ամեն օր հանդիպում եմ:
4. Ապագայում ես իմ բարկությունը կօգտագործեմ որպես «զարթուցիչ», որպեսզի այն զգուշացնի ինձ, թե էլի որ անձնական իրավունքը ես պետք է տամ Աստծուն:
5. Ես կաշխատեմ իմ բարկությունն օգտագործել Աստծուն հաճելի ձևով:

Ստորագրություն

Ամսաթիվ

Այս նախագծի վերջին էջի հակառակ կողմում Աստծուն ուղղված մի աղոթք գրիր քո այն որոշման վերաբերյալ, ըստ որի Նրան ես տալու քո անձնական իրավունքները: Պատմի՛ր քո վախերի և դժվարությունների մասին, որոնց դու հանդիպում ես այս որոշման հետ կապված: Պատմի՛ր Նրան այն փոփոխությունների մասին, որոնք դու հույս ունես, որ տեսնելու ես:

Նախագիծ 3., էջ 2.

This image shows a single sheet of white paper with horizontal ruling lines. The lines are evenly spaced and run across the width of the page. There are no margins, text, or other markings on the paper.

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

**Բարկություն և
անձնական իրավունքներ
Նախագիծ 4**

Իմ առաջին քննությունն առանց իմ անձնական իրավունքների

- Ա. Կարդա՛ հետևյալ հատվածները և նշումնե՛ր արա դրանց վերաբերյալ:
Ա Կորնթացիներին 13:4-8, Սաղմոս 37:7-9:

- Բ. Երբ մարդն իր անձնական իրավունքները տալիս է Աստծուն, կարող է վստահ լինել, որ Աստված կստուգի նրան՝ տեսնելու համար. (1) արդյո՞ք նա անկեղծ է, (2) արդյո՞ք նա իր քույր անձնական իրավունքներն է տվել Աստծուն: Մատանան նույնպես կփորձի քեզ՝ մեղքի գայթակղությամբ, որպեսզի բարկանաս մարդկանց վրա: Նա կփորձի քեզ ապացուցել, որ դու չես կարող ապրել առանց քո անձնական իրավունքների:

Փորձի՛ր հիշել, թե ինչեր տեղի ունեցան այն ժամանակվանից ի վեր, երբ դու քո անձնական իրավունքները տվեցիր Աստծուն: Գրի՛ր մի օրինակ, երբ ինչ-որ մեկը փորձել է ոտնահարել քո նախկին իրավունքները:

1. Ո՞ր անձնական իրավունքի մասին է խոսքը:

2. Ինչպե՞ս դու հակադդեցիր: Դու զգացիր, որ ուզում ես բարկանա՞լ: Դու ինքդ քեզ թույլ տվեցի՞ր բարկանալ:

Բարկություն և անձնական իրավունքներ
Նախագիծ 4., էջ 2.

3. Ի՞նչ զգացիր այդ իրավիճակի վերաբերյալ երկու ժամ անց:

4. Ի՞նչ սովորեցիր այդ դեպքից:

5. Աստվածաշնչյան ^{ո՞ր} համարները օգտագործեցիր քեզ օգնելու համար:
Կամ. աստվածաշնչյան ^{ո՞ր} համարը կարող ես հաջորդ անգամ օգտագործել,
որը կօգնի քեզ՝ արձագանքել Հիսուսին հաճելի ձևով:

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 5

Բարկությունն Աստվածաշնչում

Այս նախագծի նպատակն է տեսնել, թե ինչ է Աստված ասում բարկության վերաբերյալ: Կարդա՛ յուրաքանչյուր հարցը, գտի՛ր և կարդա՛ նշված յուրաքանչյուր համարը, որից հետո գրի՛ր քո պատասխանը քո բառերով:

1. Երբ մարդը բարկացած է, նա ի՞նչը կարող է հեշտությամբ անել: Կարդա՛ Եփեսացիներին 4:26-27:

2. Կարդա՛ Հակոբոս 1:20-ը: Քո կարծիքով ինչո՞ւ է մարդու բարկությունը նրան հեռու պահում Աստծո հետ ճիշտ փոխհարաբերություններ ունենալուց:

3. Ի՞նչ է Աստված ասում, որ անենք մեր բարկության հետ՝ Եփեսացիներին 4:31-ում և Կողոսացիներին 3:8-ում:

4. Ո՞ր մեղքերն են բարկության հետ թվարկված Եփեսացիներին 4:31-ում և Կողոսացիներին 3:8-9-ում:

1. _____	5. _____
2. _____	6. _____
3. _____	7. _____
4. _____	

Բարկություն և անձնական իրավունքներ
Նախագիծ 5., էջ 2.

5. Ինչպե՞ս է Առակաց 12:16-ը նկարագրում արագ բարկացող մարդուն:

6. Ինչպե՞ս է բարկությունն ազդում մարդու վրա: Կարդա՛ Առակաց 14:29-ը:

7. Ինչպե՞ս կարող է մարդը օգնել մեկ ուրիշին՝ հանդարտեցնելու համար նրա բարկությունը: Կարդա՛ Առակաց 15:1-ը:

8. Ի՞նչ է զգուշացնում Առակաց 19:19-ը բարկացկոտ մարդկանց վերաբերյալ:

9. Ինչպե՞ս կարող եմ ես հանդարտեցնել բարկացած մարդուն: Կարդա՛ Առակաց 21:14-ը:

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 6

Հիսուսը և Իր բարկությունը

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլխում քննարկվում է, թե ինչպես էր Հիսուսն արտահայտում Իր բարկությունը: Ներքևի համարներից ընտրի՝ ր երկուսը և հետազոտի՝ ր, թե ինչպես էր Հիսուսն օգտագործում Իր բարկությունը: Նախքան այս նախագծի վրա աշխատելը տե՛ս. միգուցե քո ուսուցիչը ցանկանում է քեզ հանձնարարել, թե որ պատմությունն օգտագործես տվյալ նախագծի համար:

1. Մարկոս 3:1-6 (Հիսուսը բժշկում է չորացած ձեռքով մարդուն):
2. Մարկոս 10:10-16 (Հիսուսն օրհնեց փոքրիկ երեխաներին: Նա բարկացավ, որ փորձում էին երեխաներին հեռու պահել Իրենից):
3. Հովհաննես 11, ամբողջ գլուխը, հատկապես տե՛ս հհ. 33-րդը և 38-րդը (Հիսուսը բարկացավ Ղազարոսի մահվան ժամանակ):
4. Մատթեոս 21:12-17 կամ Հովհաննես 2:12-22 (Հիսուսը մաքրագործում է տաճարը):

Օրինակ 1. Օգտագործված համարը _____

1. Ի՞նչը բարկացրեց Հիսուսին այս իրավիճակում:

2. Ինչպե՞ս Հիսուսը ցույց տվեց, որ բարկացած է:

3. Ի՞նչ արեց Հիսուսն Իր բարկության հետ:

4. Ինչպե՞ս մյուս մարդիկ արձագանքեցին Նրա բարկությանը (սա այնքան էլ հստակ չի նշված աստվածաշնչյան որոշ պատմություններում):

Բարկություն և անձնական իրավունքներ

Նախագիծ 6., էջ 2.

5. Ի՞նչ դաս կարող ես սովորել Հիսուսից այն առումով, թե ինչպես օգտագործես բարկությունը քո կյանքում:

Օրինակ 2. Օգտագործված համարը _____

1. Ի՞նչը բարկացրեց Հիսուսին այս իրավիճակում:

2. Ինչպե՞ս Հիսուսը ցույց տվեց, որ բարկացած է:

3. Ի՞նչ արեց Հիսուսն Իր բարկության հետ:

4. Ինչպե՞ս մյուս մարդիկ արձագանքեցին Նրա բարկությանը (սա այնքան էլ հստակ չի նշված աստվածաշնչյան որոշ պատմություններում):

5. Ի՞նչ դաս կարող ես սովորել Հիսուսից այն առումով, թե ինչպես օգտագործես բարկությունը քո կյանքում:

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 7

Բարկացած մարդիկ Աստվածաշնչում

Ցուցումներ.

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլխում քննարկվում է, թե ինչպես էին աստվածաշնչյան տարբեր մարդիկ արտահայտում իրենց բարկությունը: Ընտրի՛ր ներքևում գտնվող պատմություններից մեկը և հետագոտի՛ր, թե ինչպես տվյալ մարդն օգտագործեց իր բարկությունը: Նախքան այս նախագծի վրա աշխատելը տե՛ս. միգուցե քո ուսուցիչն ուզում է հանձնարարել, թե որ պատմություններն օգտագործես տվյալ նախագծի համար:

1. Կայեն. Ծննդոց 4:3-15
2. Հովսեփ. Ծննդոց 37:12-36 և Ծննդոց 50:15-21 (Այս պատմության մեջ գրված չէ, որ Հովսեփը բարկացավ իր եղբայրների վրա: Ինչպե՞ս նա արձագանքեց բարկանալու փոխարեն):
3. Մովսես. Թվոց 20:1-13
4. Դավիթ. Ա Թագավորաց 25
5. Հովնան. Հովնանի 3-րդ և 4-րդ գլուխներ

Այս պատմություններից ոչ բոլորն ունեն հատուկ պատասխաններ աստվածաշնչյան համարների հարցերին:

Օգտագործված համարն ու անձնավորությունը _____

1. Ի՞նչը պատճառ հանդիսացավ, որ այս մարդը բարկանա տվյալ իրավիճակում: Հովսեփի դեպքում. Ի՞նչը կարող էր պատճառ հանդիսանալ, որ նա բարկանար:

2. Ո՞ր անձնական իրավունքն էր ոտնահարվել: Ո՞ւմ կողմից: Հովսեփի դեպքում. Ո՞ր անձնական իրավունքի խախտումը կարող էր գրգռել նրա բարկությունը (դու պետք է քո կարծիքն օգտագործես այս հարցին պատասխանելիս):

Բարկություն և անձնական իրավունքներ

Նախագիծ 7., էջ 2.

3. Ի՞նչ արեց այս մարդն իր բարկության հետ: Հովսեփի դեպքում. Ինչպե՞ս նա արձագանքեց բարկանալու փոխարեն:

4. Ինչպե՞ս մյուս մարդիկ արձագանքեցին նրա բարկությանը:
Ինչպե՞ս Աստված արձագանքեց նրա բարկությանը:
Հովսեփի դեպքում. Ինչպե՞ս նրա եղբայրներն արձագանքեցին նրա վարմունքին (սա աստվածաշնչյան որոշ պատմությունների մեջ հստակ նշված չէ):

5. Ի՞նչ կարող ես սովորել այս պատմությունից՝ բարկությունը քո կյանքում օգտագործելու առումով:

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 8

Զարգացնել արձագանքելու նոր ձևեր

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլխում (58-59-րդ էջեր) մենք քննարկում ենք արձագանքելու նոր ձևեր զարգացնելու կարևորությունն այնտեղ, որտեղ նախկինում բարկությունն էինք կիրառում: Մոտեցումը, որը դու կարող ես կիրառել, այն անձնական իրավունքների ցանկը կազմելն է, որոնք ամենակարևորներն են եղել քեզ համար, այնուհետև նպատակներ դնելն է, թե ինչպես ես մյուս անգամ արձագանքելու, երբ ինչ-որ մեկը խախտի քո հին կանոններից որևէ մեկը: Դու կարող ես հղում անել Նախագիծ 2-րդի՝ անձնական իրավունքների ցանկին:

Ընտրի՛ր չորս անձնական իրավունքներ և ամեն մեկի համար գրի՛ր առնվազն մեկ նպատակ, թե ինչպես կարող ես նոր ձևով արձագանքել՝ ի տարբերություն նախկին՝ անցյալում քո բարկությունը օգտագործելուն:

1. Իմ հին անձնական իրավունքը.

Իմ նպատակը՝ նոր ձևով արձագանքելու վերաբերյալ.

2. Իմ հին անձնական իրավունքը.

Իմ նպատակը՝ նոր ձևով արձագանքելու վերաբերյալ.

Բարկություն և անձնական իրավունքներ
Նախագիծ 8., էջ 2.

3. Իմ հին անձնական իրավունքը.

Իմ նպատակը՝ նոր ձևով արձագանքելու վերաբերյալ.

4. Իմ հին անձնական իրավունքը.

Իմ նպատակը՝ նոր ձևով արձագանքելու վերաբերյալ.

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 9

Զարգացնել ներքին դրական որակներ

1. Հիշի՛ր, թե քո որ անձնական իրավունքն է ինչ-որ մեկն այսօր կամ մեկ-երկու օր առաջ ոտնահարել: Այնուհետև պատասխանի՛ր այս երեք հարցերին:

Ա. Ի՞նչ արեց նա քեզ:

Բ. Քո ո՞ր անձնական իրավունքը նա ոտնահարեց:

Գ. Ինչպե՞ս դու արձագանքեցիր:

2. Տե՛ս ներքին դրական որակների ցանկը Կողոսացիներին 3:12-15-ում:
Նշի՛ր մեկ ներքին դրական որակ, որով դու կարող էիր արձագանքել,
երբ քո անձնական իրավունքը ոտնահարվեց: Ընտրի՛ր այն մեկը, որն
ամենաօգտակարը կլիներ քեզ համար:

Դու կարող ես նաև ընտրել բնավորության գծերից մեկը, որոնք թվարկված են
Անձնական ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացի՝
Բնավորության գծերի դասարան ձեռնարկում:

Բարկություն և անձնական իրավունքներ

Նախագիծ 9., էջ 2.

3. Բացատրի՛ր, թե ինչպես դու կարող էիր ցույց տալ կամ կիրառել այդ ներքին դրական որակը՝ նրան արձագանքելիս: Եղի՛ր կոնկրետ:

4. Թվարկի՛ր երեք գործողություններ, որոնք դու կարող ես կատարել՝ այս ներքին դրական որակները քո կյանքում զարգացնելու համար:
Եղի՛ր կոնկրետ:

1. _____

2. _____

3. _____

Անուն _____

Դասարան _____

Ամիս, ամսաթիվ _____

Բարկություն և

անձնական իրավունքներ

Նախագիծ 10

Իմ անձնական պատասխանատվությունները

1. Կարդա՝ համարը և նշումներ՝ ր արա դրա վերաբերյալ: Եփեսացիներին 4:26-32:

2. Քո պատասխանատվությունների վերաբերյալ ցուցա՛կ կազմիր:
Մի՛ շփոթիր սրանք քո անձնական իրավունքների հետ: Դու կարող ես քո
պատասխանատվությունները ցուցակագրել տարբեր խմբերի ներքո:
Ահա մի քանի խմբեր, որոնք դու կարող ես օգտագործել քո անձնական
պատասխանատվությունները ցուցակագրելիս:

Ընտրի՛ր առնվազն չորս խումբ և գրի՛ր առնվազն երկու
պատասխանատվություն յուրաքանչյուր խմբի համար: Տե՛ս Ուսանողի
ձեռնարկի 63-64-րդ էջերը՝ սրա վերաբերյալ ավելի շատ տեղեկություն
ստանալու համար:

Իմ պատասխանատվությունները՝ ուղղված.

- | | |
|---------------------|------------------|
| 1. Աստծուն | 4. իմ ընկերներին |
| 2. իմ ընտանիքին | 5. իմ աշխատանքին |
| 3. իմ առաջնորդներին | 6. իմ երկրին |

(Քո ցուցակը շարունակի՛ր 2-րդ էջի վրա):

Բարկություն և անձնական իրավունքներ
Նախագիծ 10., էջ 2.

3. Թվարկի՝ ը առնվազն երեք պատասխանատվություններ և գրի՝ ը մեկական նպատակ ամեն մեկի համար, նաև՝ թե ինչպես կարող ես ցույց տալ, որ այդ պատասխանատվությունն իրականացնում ես քո կյանքում:

1. Իմ պատասխանատվությունը. _____

Իմ նպատակը. _____

2. Իմ պատասխանատվությունը. _____

Իմ նպատակը. _____

3. Իմ պատասխանատվությունը. _____

Իմ նպատակը. _____

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը _____ Բարկություն և անձնական իրավունքներ _____

Հարցաշար

Անգիր համարներ

Ամսաթիվ

1	_____	_____
2	_____	_____
3	_____	_____

Նախագծեր

Ամիս, ամսաթիվ

1	_____
2	_____
3	_____
4	_____
5	_____
6	_____
7	_____
8	_____
9	_____
10	_____

Ստուգարք Ամսաթիվ _____